# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 դեկտեմբերի 2017 թվականի N 294-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ N 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջների, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսարյուջետային վերահսկողության տեսչության 2017 թվականի հունիսի 19-ի N 23-Ա ակտի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 278-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լադիկ Նահապետյանին.*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի կումարների վերահաշվարկման արդյունքում ***958600*** *(ինը հարյուր հիսունութ հազար վեց հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական կրթության ծրագրով 2017-2018 թվականների ուսումնական տարվա կոմպլեկտավորմամբ 18 երեխա ավել ներկայացնելու հետևանքով ***602400*** *(վեց հարյուր երկու հազար չորս հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի դեկտեմբերի 14
ք. Հրազդան